

7099



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարարի
պարտականությունները կատարող Տիգրան Գաբրիելյան



2024թ.
06.2024թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 093 - 24

Նախաձեռնող՝

«ՍԱՄԱՐՄ» ՍՊԸ

Վաղարշապատ համայնք, Սուրբ Մ. Մաշտոցի փողոց h 102

Գործունեությունը՝

Բազմաբնակարան բնակելի շենքի կառուցում

Արմավիրի մարզ, Վաղարշապատ համայնք, Սուրբ Մ. Մաշտոցի փողոց h 26

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 093 - 24

«21» հունիսի 2024թ.

Արմավիրի մարզ Վաղարշապատ համայնք, Սուրբ Մ.Մաշտոցի փողոց թիվ 26 հասցեում
նախատեսվող բնակելի շենքի կառուցում

Նախաձեռնող՝

«ՍԱՄԱՐՄ» ՍՊԸ

Փաստաթղթի տեսակը՝

Շրջակա միջավայրի վրա ազդեցության
ՇՄԱԳ հաշվետվություն և նախագծային փաստաթուղթ

Գործունեության տեսակը՝

«Բ» կատեգորիա

Գտնվելու վայրը՝

Արմավիրի մարզ, Վաղարշապատ համայնք,
Էջմիածին բնակավայր, Սուրբ Մ. Մաշտոցի
փողոց 26 հասցե

Ներածական մաս. Փորձաքննության ներկայացված հաշվետվությամբ և նախագծով գործունեությունն իրականացվելու է Վաղարշապատ համայնքի, Սուրբ Մ.Մաշտոցի փողոց թիվ 26 հասցեում գտնվող հողամասի տարածքում: Համաձայն՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի, 8-րդ կետի «ա» ենթակետի նախատեսվող գործունեությունը հանդիսանում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակ:

Նախատեսվող գործունեության իրականացման համար հիմք են հանդիսացել բնակելի շենքի նախագծային փաստաթղթերը՝

- Սեփականության վկայականը՝ N 04122023-04-0057

- Վաղարշապատի համայնքապետարանի կողմից 18.12.2023թ.-ին տրված N CPP0 0001-0100 նախագծման թույլտվությունը (ՃՀԱ),

- «ԳԵՈՂՈՆ» ՍՊԸ-ի կողմից 05.2023թ.-ին տրված ինժեներաերկրաբանական և երկրաֆիզիկական եզրակացությունները

Նկարագրական մաս. Նախագծով նախատեսվում է կառուցել նոր բազմաբնակարան շենք: Շենքի հատակագիծն ունի կանոնավոր ուրվագիծ, ունի 43,6x17,9 մ առանցքային չափեր: Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է ընկերության սեփականության վկայականով տրված տարածքում, որտեղ՝ հողամասի նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի է, իսկ հողատեսքը՝ բնակելի կառուցապատման:

Հողի ընդհանուր մակերես՝ 2537,4 քմ

Կառուցապատման մակերես 926,4 քմ



Կանաչապատման մակերես՝ 1020,1 քմ
Մայթ, ճանապարհ, ճեմուղի՝ 590,9 քմ
Բնակարանների քանակ՝ 94 հատ

Ավտոկայանատեղիի կառուցապատման մակերեսը՝ 1047.7ք.մ, 0-ական նիշի նկատմամբ բարձրությունը կազմում է 3,6 մետր: Ստորգետնյա ավտոկայանատեղիներն 19 հատ են նախատեսված:

Շենքը նախատեսված է կառուցել Սուրբ Մ. Մաշտոց փողոցից մոտ 10 մետր հեռավորության վրա, գոյություն ունեցող շենքերի կառուցապատման գծով, երկու շենքերի միջնամասում՝ **գոյություն ունեցող շենքերից մեկին կից, առանձնացված հակասեյսմիկ կարանով, իսկ մյուս շենքին այնպես, որ ապահովվի հետիոտնային անցում փողոցի և բակի կապը ապահովելու համար:** Շինությունում նախատեսված է նկուղ, թվով 9 վերգետնյա հարկ և տեխնիկական հարկ, որոնք միմյանց կապվում են ներքին աստիճանավանդակներով, 2 մարդատար վերելակով: Առաջին հարկը նախատեսված է որպես առևտրահասարակական տարածք, իսկ մնացած հարկերը բնակարաններ: Շենքում նախատեսված է թվով երկու շքամուտքեր՝ բակի կողմից բնակարանների սպասարկման համար, նաև առաջին հարկից ելք՝ բակի և Մ. Մաշտոց փողոցի կողմերից առևտրահասարակական տարածքների համար: Նկուղային հարկի սպասարկման համար կա նախատեսված լրացուցիչ մուտք, որի մոտեցումը կկազմակերպվի բակից: Հարկերի բարձրությունները կազմում են

- Նկուղային հարկ $h=3,60$ մ (հատակից-հատակ),
- Առաջին հարկ $h=4,80$ մ (հատակից-հատակ),
- Տիպարային 8 հարկեր $h=3,30$ մ (հատակից-հատակ),
- Տեխնիկական հարկ $h=3,00-4,5$ մ (հատակից-առաստաղ):

Բազմաֆունկցիոնալ շենքի նկուղային հարկում նախատեսված են ավտոկայանատեղիներ, պոմպակայան և տեխնիկական տարածքներ: Ստորգետնյա հարկի մակերեսը կազմում է 1047.7 ք.մ, որում տեղակայվելու են 19 ավտոմեքենա: Նկուղային հարկը արտակարգ իրավիճակների դեպքում պետք է ծառայի որպես պարզ թաքստոց բնակիչների և այցելուների անվտանգության ապահովման համար: Շինության առաջին հարկում նախատեսված առևտրահասարակական տարածք: Հարկի մակերեսը կազմում է 926.4 ք.մ, որից 817.0 ք.մ օգտակար մակերես: Շենքի 7 տիպարային հարկում՝ 2-րդ հարկից 8-րդ հարկում և 9-րդ հարկերում նախատեսված են 94 բնակարաններ, յուրաքանչյուր հարկում 12 բնակարան, իսկ 9-րդ հարկերում 10 բնակարան: Բոլոր հարկերի գումարային մակերեսը 8083.6 ք.մ, որից 6759.2 ք.մ օգտակար մակերեսներ: Տեխնիկական հարկը երկու հատվածամասով է և նախատեսված է աստիճանավանդակ և տեխնիկական սենյակ, ինժեներական սարքավորումների սպասարկման համար հատվածամասերի ընդհանուր մակերեսը կազմում է 65.4 ք.մ, որից 77.2 ք.մ օգտակար մակերեսներ: Բազմազմաբնակարան շենքի տանիքը հարթ է ջերմամեկուսացմամբ, ջրահեռացումը ներքին, կազմակերպված: Պարփակող պատերը թեթև բետոնե ծակոտկեն բլոկներով: Արտաքինից նախատեսված են օդափոխվող երեսապատում, մետաղական կախովի հիմնակմախքով, ջերմամեկուսիչ ներքնակներով, երեսապատված տուֆե սալիկներով: Որմնախարսխային մասում և առաջին հարկում երեսապատումը նախատեսված է բազալտե սալերով:

Ավտոկայանատեղում նախագծված են մեխանիկական դրդմամբ ներածման և



արտաձման օդափոխության համակարգեր: Ներաձման և արտաձման համակարգերի սարքավորումները տեղադրված են հարկի առաստաղի տակ: Օդափոխության համար օգտագործվելու են կոմպակտ համակարգեր, որոնք անհրաժեշտության դեպքում կարող են փոխարինվել նույն պարամետրերով: Ներաձումը և արտաձումը կատարվում է կարգավորող ճաղավանդակների միջոցով: Շենքի բնակելի մասի միջանցքներից և ավտոկայանատեղերից իրականացվելու է ծխահեռացում: Ծխահեռացման օդամուղերը տեղակայված են տանիքի վրա: Հրդեհի ժամանակ վերելակների հորաններում և ավտոկայանատեղի վերելակների հորանի և աստիճանավանդակի նախասրահներում նախատեսված են դիմհարման համակարգեր: Հակահրդեհային օդամուղների գործարկումը կատարվում է հրդեհային ազդասարքից և հեռակալենտրոնական վահանակից: Ավտոկայանատեղերում նախատեսված է ներաձման և արտաձման մեխանիկական համակարգեր: Արտաձման համակարգերը համակցված են ծխահեռացման համակարգերի հետ: Ստորգետնյա ավտոկայանատեղերում յուրաքանչյուր հարկի համար օդափոխման համակարգը առանձին է: Օդափոխությունը իրականացված է վնասակար գազարտանետումների նստացման և հեռացման համար: Շենքերի տանիքները նախատեսված է հարթ, չշահագործվող: Տանիքի համար նախատեսված շերտերը նույնպես հաշվարկված են բարձր ջերմային դիմադրության համար, որը բարձրացնում է շենքերի էներգաարդյունավետությունը:

Ուսումնասիրվող տեղամասում ստորերկրյա ջրերի, մակարդակը գտնվում է 6,0 - 6,5 մետր խորությունների վրա: Հորատման աշխատանքների արդյունքում ջրերի հանդիպման խորությունը 7,2-7,5 մետր է: Ուսումնասիրման հիման վրա կարելի է ասել, որ ստորգետնյա ջրերը, կախված սեզոնից, ունեն տատանման մակարդակ մոտ 0,5-1,0 մետր:

Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթները ինչպիսիք են կարստը, սողանքը, փլուզումը քարաթափությունը՝ բացակայում են:

Ընդհանուր շինարարության նորմատիվ տևողությունը ծրագրվում է 30 ամիս շինարարական աշխատանքների կատարման համար թույլատրման տրամադրման օրվանից:

Շինարարության նյութատեխնիկական մատակարարումը նախատեսվում է շինարարական ինդուստրիայի ձեռնարկություններից և գլխավոր կապալառու կազմակերպության արտադրական բազայից: Բետոնային խառնուրդը միաձույլ բետոնե և երկաթբետոնե կոնստրուկցիաների համար, ինչպես նաև շաղախը շարվածքի համար առաքվում են անմիջապես շինհրապարակ ավտոբետոնախառնիչներով և շաղախատարներով:

Փոխադրամիջոցների և շինարարական մեքենաների տեխնիկական սպասարկումը և լիցքավորումը իրականացվելու է շինհրապարակից դուրս մասնագիտացված 18 կետերում: Տարածքում քայուղեր և վառելանյութ չի պահեստավորվելու:

Շինարարական նյութերից օգտագործվելու է ցեմենտ, մետաղական ամրաններ եւ այլ կոնստրուկցիաներ, ապակի, փայտ, սրբատաշ և կոպտատաշ քարե շար, երեսպատման նյութեր եւ այլն: Բնառեսուրսներից օգտագործվելու է միայն ջուր՝ աշխատանքային հարթակի ջրցանի՝ (օրական 2-3 անգամ, կախված սեզոնից), հանված գրունտի, ստացվող ավազի ու խճի խոնավեցման, ինչպես նաև շինարարական անձնակազմի խմելու եւ կենցաղային նպատակների համար:



Հիմնական թափոնատեսակը, որը կառաջանա շինարարական աշխատանքերի ընթացքում, կենցաղային աղբն է 60 տ և շինարարական աղբը՝ 1600տ: Շինարարական աղբը ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր: Առաջացած կենցաղային աղբը կտեղափոխվի աղբահավաք ծառայության կողմից:

Շինարարության փուլում տեխնիկական ջուրը կբերվի պայմանագրային հիմունքներով՝ ավտոցիստեռներով, էջմիածին քաղաքի ոռոգման ջրի ցանցից, կնքելով համապատասխան պայմանագիր: Շինարարության փուլում աշխատողների կոմունալ կենցաղային պայմանները կապահովեն տեղադրելով բիոզուգարաններ, խմելու ջուրը կմատակարարվի տարրաներով: Շինարարական աշխատանքների ընթացքում և շահագործման փուլում էլեկտրամատակարարումը համաձայն տեխնիկական պայմանի հնարավոր է իրականացնել՝ կառուցելով էջմիածին 110/35/10 կՎտ ե/կ-ից բջ 22 ԲԵ1-ից 10կՎտ բաշխիչ վահանից մալուխային գիծ՝ տեղադրելով տրանսֆորմատոր և կառուցելով 0,4 կՎտ մալուխագծեր: Շենքում նախատեսվում է իրականացնել անհատական օդափոխման և ջեռուցման համակարգ, որոնց արտաքին բլոկները նախատեսվում է քողարկել հատուկ դրանց համար նախատեսված խորշերում: Համապատասխան ծայնամեկուսիչ նյութերի օգտագործմամբ նախատեսվում է ապահովել աղմուկի ցածր մակարդակ:

Պարճառաքանական մաս. Նախագծի շրջանակներում կատարվել է գործունեությանն առնչվող գոյություն ունեցող բնապահպանական և սոցիալական ելակետային պայմանների ուսումնասիրություն: Դիտարկվել է գործունեության իրականացման արդյունքում հնարավոր բնապահպանական և սոցիալական վնասակար ազդեցությունների կանխատեսումը և դրանց կանխարգելմանը, նվազեցմանը կամ բացառմանն ուղղված համապատասխան մեղմման միջոցառումներ, դրանց արդյունավետ իրականացման մեխանիզմները: Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները հիմնականում կապված են՝

• շինարարության ընթացքում մարդու առողջության և աշխատանքի անվտանգության հետ:

- օդային ավազանի աղտոտվածության հետ՝ պայմանավորված շինտեխնիկայի աշխատանքի արդյունքում արտանետումների, հողային աշխատանքներով,
- հողային, ջրային ռեսուրսների օգտագործմամբ,
- արտակարգ իրավիճակների, սեյսմիկ ռիսկերի առաջացման հետ
- թափոնների առաջացման և կառավարման հետ

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է կառուցապատումից ազատ տարածքի բարեկարգում և կանաչապատում՝ 1020.1մ² մակերեսով:

Եզրափակիչ մաս. Հանրային ծանուցումը իրականացվել է համաձայն՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի և ՀՀ կառավարության 1325-Ն որոշման սահմանված կարգի. քննարկումները կատարվել են Վաղարշապատ համայնքի էջմիածին բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում: Հանրային քննարկումների նպատակն է հաշվի առնել բոլոր շահագրգիռ կողմերի և ազդակիր հանրության կարծիքները, առարկություններն,



առաջարկություններն և դիտողությունները նախատեսվող գործունեության վերաբերյալ: Փորձաքննական գործընթացին ներգրավվել են առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, կադաստրի կոմիտեն, քաղաքաշինության կոմիտեն, Արմավիրի մարզպետի աշխատակազմը, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները: Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել հաշվետվության փաթեթի լրամշակված տարբերակում: Նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բնապահպանական և սոցիալական բացասական ազդեցությունները կլինի թույլատրելի նորմայի սահմաններում՝ նախատեսվող բնապահպանական միջոցառումները իրականացնելու դեպքում:

**Պարտադիր կատարման ենթակա պահանջներ
Ապահովել պահանջների կատարումը աշխատանքները սկսելու պահից:**

- Շինարարության ժամանակ և շահագործման հաշվարկային պայմաններում բացառել հարակից բնակելի շենքերի կոնստրուկցիաների կամ ամբողջությամբ շենքի շահագործման հատկությունների անթույլատրելի վատթարացումը, ձևախախտման (դեֆորմացիայի) կամ ճաքերի առաջացումը:
- Հարակից բնակելի տարածքները պետք է պաշտպանված լինեն անձրևաջրերի, հալոցքային և գրունտային ջրերի ներթափանցումից և ինժեներական ցանցերից հնարավոր կենցաղային ջրերի արտահոսքից, ինժեներական համակարգի կոնստրուկտիվ միջոցներով և տեխնիկական սարքավորումներով:
- Բնակելի տարածքում, բնակելի, հասարակական շենքերի սենքերում աղմուկի թույլատրելի մակարդակները պահպանելու համար կիրառել ձայնակլանիչ սարքեր:
- Համաձայն ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի՝ «Հիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին»:
- Կառուցապատման աշխատանքների ընթացքում պահպանել «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի 11 հոդվածով սահմանված պահանջները՝
- Շրջակա տարածքները (մայթերը, ճանապարհները) պետք է զերծ պահվեն շինարարական աղբից՝ փոշին նվազագույնի հասցնելու նպատակով:
- Շինարարության ընթացքում՝ ցանկապատել շինարարական հրապարակները, շենքերը և շինությունները ծածկել շինարարությանը համապատասխան բարձրությամբ անթափանց թաղանթով:
- Ավազը, ցեմենտը, գաջը, խիճը, այլ սորուն նյութերը, հողային զանգվածները, ինչպես նաև շինարարական աղբը տեղափոխել փոշու համար անթափանց ծածկոցներով ծածկված տրանսպորտային միջոցներով:
- Կանաչապատումը կատարել Վաղարշապատ համայնքի կողմից համաձայնեցված կանաչապատման նախագծին համապատասխան:



ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Վաղարշապատ համայնքի, Էջմիածին բնակավայրի Սուրբ Մ.Մաշտոցի փողոց թիվ 26 հասցեում նախատեսվող բնակելի շենքի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության ՇՄԱԳ հաշվետվության և նախագծային փաստաթղթին տրվում է դրական փորձաքննական եզրակացություն :

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն



Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝

A handwritten signature in blue ink, appearing to be "Լ. Երիքնազ".

Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝

A handwritten signature in blue ink, appearing to be "Շուշանիկ Կարապետյան".

Շուշանիկ Կարապետյան